

## Գլուխ I

### ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՔՆԱՌՐՈՆՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՅԻՆ

#### I. – Փիլիսոփայության ծնունդը

Փիլիսոփայությունը չի ծնվել մեկ օրում ու նաև չի ծնվել ոչնչից: Բայց աշխարհի մասին պատկերացումներն ու իմաստությունները, որոնցից, ինչպես կարծում են, այն սկիզբ է առնում, իրականում միայն հող են նախապատրաստում, որպեսզի բանական խոսքին հնարավորություն տան հաստատելու իր առանձնահատկությունը: Հակառակ դեպքում դրանք նրան խեղդում են ձվի մեջ, խանգարում ծնվելու, այլ կերպ ապահովում մարդկությանն անհրաժեշտ նրա որոշ ֆունկցիաները և իմանալու ցանկությունը թաղում այլ ձգտումների մեջ:

Եթե տվյալ պայմանը անտիկ Հունաստանում իրականացել է ավելի հստակորեն ու ճարտարորեն, քան այլուր, ապա դա չի նշանակում, թե բոլոր հույն մտածողներն ու իմաստունները բառիս բուն իմաստով փիլիսոփաներ են: Արիստոտելը որքան էլ Թալեսին (Ք.ա. VI դար) որակի իբրև «մտահայեցող առաջին փիլիսոփա», հարկ է խոստովանել, որ նրա ուսմունքը դեռևս ելնում է ավանդական տիեզերաբանական դիսկուրսից, ինչն ամեն բանի հիմքում դնում է խորհրդանշական սկզբնապատճառ:

Թալեսի համար այդ սկզբնապատճառը *ջուրն* է, Անաքսիմանդորոսի համար՝ *անորոշ անսահմանը*, Անաքսագորասի համար՝ *ոգին*: Պյութագորասը գերադասում է իրականի ընդհանուր բանալին փնտրել թվերի խորհրդանշանի ամբողջության մեջ, մինչդեռ Ժամանակակիցների կողմից այնքան գովաբանված Հերակլիտն ամեն ինչը դարձնում է հակադրությունների հակադրության անընդհատ

փոփոխվող արդյունք: Բայց եթե այս մտածողները, գիտնականները կամ իմաստունները, որոնց հետադարձ հայացքով որակում ենք «նախաստկրատյան», ունեցել են գալիքն արգասավորող մեծ ներշնչանքներ, ապա հարկ էր սպասել Պարմենիդեսին, որպեսզի փիլիսոփայությունն ունենար ներկայանալի «հայր»:

**Պարմենիդեսը** (թ.ա. 540–450) հեղինակն է հայտնի մի «Պոեմի», որը դեռևս ներկայացնում է խրատաբանական գրականության արտաքին բոլոր հատկանիշները: Եվ սակայն ամեն ինչ փոխված է, որովհետև նա պնդում է, որ գոյություն ունի կեցություն (համասեռ, ավարտուն, ինքնաբավ՝ «զնդած»), և որ այդ կեցությունն *արտահայտվում է մտածողության մեջ*:

Կեցության և մտածողության նույնության բացասական կողմը պակաս կարևոր չէ. չգոյություն գոյություն չունի, այն հնարավոր չէ ո՛չ մտածել, ո՛չ արտահայտել: Լինելով կեցության «հայր»՝ Պարմենիդեսը նաև չգոյության հայրն է. *գոյություն ունի կեցություն, գոյություն չունի չգոյություն*:

Այստեղ գործ ունենք ոչ թե ուսմունքների շարքը դասվող փիլիսոփայական որևէ ուսմունքի, այլ՝ *փիլիսոփայական սեռի*, իբրև այդպիսին, կազմության հետ: Փիլիսոփայության առարկան գոյի կեցությունն է: Փիլիսոփայել նշանակում է խոսել կեցության մասին: Փիլիսոփայական ճշմարտությունը կեցության և դիսկուրսի նույնությունն է: Հիմնական երկընտրանքը *ճշմարիտի և սխալի* երկընտրանքն է՝ հիմնված *կեցության և չգոյության* հակադրության վրա:

Գաղտնահաղորդության քայլն այժմ ուղղակիորեն հանգեցնում է ոչ թե ապրելու արվեստի, այլ՝ *գոյի կեցության* դիսկուրսի: Մարդուն տանջող ցանկության դեմ պայքարելու փոխարեն (չմոռանա՞նք, որ բրահմայականությունն ու բուդդիայականությունը համարյա ժամանակակիցներ են), անհրաժեշտ է այդ ցանկությունը միտել *ճշմարտությանը*՝ կապերը խզելով հարաշարժ կայացման փոփոխական ու իմաստագուրկ երևույթների աշխարհի հետ, կարճ ասած՝ այն ամենի, ինչը գերում է անմիտների ամբոխին:

## II. – ՊԼատոն

Ք.ա. 427–347 թթ. – Աթենացի, Սոկրատեսի աշակերտ, իշխանների (Դիոնիսիոս I և II Սիրակուզցիների) խորհրդատու, Ակադեմիայի հիմնադիր Պլատոնը բառիս բուն իմաստով փիլիսոփա է, մնայուն չափանիշ: Յեշտ չէ հասու լինել նրա անսպառ հարստություններին:

**1. Սոկրատեսի դասը.** – Դժվար է պատմական Սոկրատեսին (469–399), որը չի թողել և ոչ մի գրվածք, տարբերել Պլատոնի կողմից բեմահարթակ հանված Սոկրատեսից: Այդուհանդերձ, աչքի է զարնում մի դաս:

Սոկրատեսը ներկայանում է իբրև մեկը, ով ոչինչ չգիտի, սակայն գիտի, որ ոչինչ չգիտի. ինչն էլ նշանակում է, որ նա միշտ ավելին գիտի նրանցից, ովքեր չգիտեն իրենց չիմացության մասին: Սոկրատեսը ո՛չ վարդապետ է, ո՛չ ուսուցիչ, այլ պարզապես՝ խթանող, հաղորդատու, հայելի, իր «դեմոնի» միջնորդը (բառ, որ հղում է «ճակատագրին», կոչմանը, ներշնչանքին, աստծու և մարդու միջև միջանկյալ էակին): Իսկական ճշմարտություններից զուրկ՝ Սոկրատեսն ուզում է լինել հոգիների *մանկաբարձու*, հոգիներ, որ իրենց մեջ թաքցնում են մոռացված հավիտենական ճշմարտությունը: Տգեղ, կճատ քթով, Սիլենոսի դեմքով այս մարդը բառացիորեն անճոռնի էր: Սոկրատեսը պատրաստի գիտելիք չի լցնում դատարկ աշակերտի մեջ (ասես կարելի է տեսողություն դնել կույր աչքերում՝ կասեր Պլատոնը): Յակասություն առաջացնող, տարբերություն հաստատող *հեգնանքով* նա աշակերտին առաջնորդում է դեպի սեփական անձը (ծանի՛ր գրեգ), որպեսզի վերջինս ազատագրի իր հոգին և բարեփոխի այն:

Երբ պնդում է, թե «ոչ ոք չար չէ իր կամոք», չի ազդարարում բարի կամքի տեր անգետների համընդհանուր բարեհաճությունը: Սոկրատեսն ուզում է ցույց տալ, որ նա,

ով չարիք է գործել, ցանկացել է անել այնպիսի բան, ինչը բարիք է համարել: Ուստի առաքինի մարդը նա է, ով հասել է իր կատարելության աստիճանին՝ ցանկանալով այն, ինչն իր իմացությանը իսկական բարիք է:

Բայց լինելով առավել քան իմաստուն՝ Սոկրատեսը խոսքի վկան է: Իր էությանն ու սեփական ճշմարտության նպատակին հավատարիմ՝ խոսքը բռնության հակադրությունն է: Ինքն իր նկատմամբ անհավատարմության պարագայում այն աղավաղվում է՝ վերածվելով ձևական արվեստի (ճարտասանության) կամ այլափոխվում, դառնալով համոզելու տեխնիկա, որը զենք է ուժային հարաբերություններում (սոփեստություն): Ապացույց՝ զրպարտական խոսքը կարող է համոզել դատավորներին, ամբաստանել ու սպանել անմեղին: Սոկրատեսը մեղադրվում է անհավատության ու այլասերող նանկավարժության մեջ, սակայն ընդունում է անարդարությունը, որպեսզի մինչև վերջ հարգի Քաղաք-պետության օրենքները, որոնցից ոչ ոք չի կարող խույս տալ: Արհամարիելով վերջին պահի խուսափանքները՝ խոսքի հերոսի ու նահատակի պես նա խմում է մոլեխինդը. խոսքի կարևորության համար վճարում է կյանքի գին:

Փիլիսոփայություն հիմնադրող, մի տեսակ միթոս դարձած այս ողբերգությունից ցնցված Պլատոնը փորձել է վերականգնել ճգնաժամի մեջ գտնվող *լոգոսը*, վերագտնել գեղեցիկի, լավի ու ճշմարիտի բոլոր դրույթներով ու կարգախոսներով (հերակլիտյան մոբիլիզմ, համապարփակ հարաբերականություն, մետաֆիզիկական նիհիլիզմ) կորսված չափը: Եթե ճշմարիտ է, որ փիլիսոփան ու սոփեստը նման են իրար, ինչպես շունն ու գայլը, որովհետև երկուսն էլ գործ ունեն խոսքի հետ, ապա տարբերության հաստատումն ու հիմնումը պետք է սկսել խաբուսիկ երևույթները բացառելուց:

**2. Փիլիսոփայությունը որպես գաղտնահաղորդության նախաբայլ.** – Քարանձավի հայտնի այլաբանության մեջ («Պետություն», VII), ոչ-հաղորդյալները նկարագրված են իբրև խավարի մեջ թաղված, իրենց տեղում ընդմիշտ շղթայված բանտարկյալներ, ովքեր իբրև ինքնին ռեալություններ են ընդունում այն առարկաների ստվերները, որ հմայողները սարքում են նրանց թիկունքում, մեծ խարույկի լույսի ներքո: Նրանք տառապում են ոչ թե անմիջականորեն տրված երևույթների *պակասից*, որոնց անտեղյակ են, այլ առատությունից, որոնց կառչած են ֆանատիկորեն:

Սետաֆիզիկական տգիտության գիշերվա մեջ սուզված բանտարկյալը չի կարող ինքնուրույնաբար ազատվել: Նա դրա ո՛չ ցանկությունն ունի, ո՛չ էլ միտքը: Եթե փախչեր, իսկապես ազատված չէր լինի: Հարկ է, որ արդեն հաղորդյալ, արդեն փիլիսոփա մեկը հետաքրքրվի իրենով, ազատի շղթաներից, անգամ ստիպի վեր կենալ տեղից, հետո էլ՝ շրջել գլուխը: Այլ խոսքով՝ հարկավոր է *միջնորդ*: Առանց միջնորդի անհնար է ազատվել շղթայված վիճակից, անհրաժեշտ չափով հեռանալ ու ընկալել տարբերությունը:

Այս առաջին, բացասական փուլը հնարավոր է դարձնում դրական գաղտնահաղորդությունը: Սակայն հարկ է զգուշանալ. իրականության վերաբերյալ չափազանց կտրուկ կարծիքը փոխած, հենց նոր ազատված բանտարկյալը կարող է շլանալ, կուրանալ, սուզվել մի նոր գիշերվա մեջ, այս անգամ արդեն ոչ թե լույսի բացակայությունից, այլ ավելցուկից: Ահա թե ինչու պետք է սկսել աստիճանաբար, նրան ցույց տալ փայլուն, հետո ավելի փայլուն աստղեր, այնուհետև լուսինը, վերջապես արևը՝ երթուղու ավարտը: Այսկերպ, իր համար ամենահասկանալիից և ինքնին ամենաանհասկանալիից նա կանցնի ինքնին ամենահասկանալիին և իր համար ամենաանհասկանալիին, ի վերջո՝ իր համար և ինքնին ամենահասկանալիին: Իրականում սա նշանակում է, որ անհրաժեշտ է նախ անցնել նախապատրաստական

առարկաներ (ինչպիսիք են թվաբանությունը, երկրաչափությունը կամ հարմոնիան), ինչն ընդունակ կդարձնի ձեռնանուխ լինելու դիալեկտիկային («Պետություն», 536 d):

Փիլիսոփայության պլատոնական սահմանումն, այսպիսով, շատ պարզ է. փիլիսոփայությունը ճանապարհ է դեպի ճշմարիտը գաղտնահաղորդական մի երթուղու համաձայն, սկսած այնպիսի մեկնակետից, որը միակը չէ, քանի որ իրականում ժամանման կետ է: Բանտարկյալն, իրոք, ոչ թե վայրենի է կամ էլ ի ծնե կույր, այլ՝ *ստրկացված* էակ: Այլապես, Մենոնի փոքրիկ ստրուկը Սոկրատեսի ղեկավարությամբ ինչպե՞ս կարող էր վերջապես հայտնաբերել քառակուսու մակերեսի կրկնապատկման գործողությունը («Մենոն»): Գիշտ մեթոդը նա գտնում է երկրաչափության նկատմամբ իր նախապաշարմունքներից հրաժարվելու շնորհիվ: Ամբողջ իմացությունն, իրականում, *վերա-իմացություն* է: Հոգին *վերհիշում է* ճշմարտությունը (դա հայտնի *վերհուշն* է), որովհետև ճշմարտությունն արտաժամանակային է, մշտապես առկա և երբեք չի սկսվում: Ուրեմն, չիմացությունը *մոռացություն* է. դա է արտահայտում Մոռացության գետի՝ Լեթեի մեջ հոգու սուզվելու մասին միթոսը՝ խորհրդանշելով մարմնի մեջ հոգու մտնելու իրողությունը:

Ինչպես տեսնում ենք, փիլիսոփայական *մեթոդն* անբաժանելի է իր *բովանդակությունից*՝ հոգու մեջ ճշմարտության հավերժական ներակայության <immanence> ուսմունքից: Մեթոդը չի կարող արտացոլվել յուրաքանչյուրի կողմից ցանկացած առիթով օգտագործելի մեխանիկական կանոններում: Կա գիտության մանկավարժություն, այլ ոչ թե մանկավարժության գիտություն:

**3. Իրապես իրականի որոնումներում.** – Քանի որ ճշմարիտ իրականությունն այն չէ, ինչը երևում է, ուրեմն այն է, ինչի պատճառով իրականությունն այնպիսին է, ինչպիսին որ է՝ մտքով ընկալված, խոսքով արտահայտված: Պլատոնը

դա անվանումն է *Գաղափար*, բառ, որ հղում է տեսանելի (հոգու կողմից) ձևին (էական): Գեղեցկությունն, ուստի, գեղեցիկ իրը չէ (կաթսա, կին կամ զամբիկ, ինչպես կարծում է միամիտ Հիպպիասը), այլ այն, ինչը գեղեցիկ է դարձնում տվյալ իրը: Նմանապես, չկան իրար հավասար իրեր, նաև ճշմարիտ իրեր. իսկապես հավասար է միայն ինքնին հավասարը, միայն ճշմարիտ ճիշտն է ինքնին ճիշտ: Ուստի, Գաղափարները իրականության ու ճանաչողության բանալիներ են: Առանց դրանց լեզուն կստեղծեր մի փակ աշխարհ, հղում կկատարեր սոսկ ինքն իրեն:

Գաղափարների շնորհիվ բարձրանում են դեպի մեկը՝ հրաժարվելով երևույթների բազմությունից: Այս իմաստով Գաղափարը բազմության միասնությունն է, սակայն ոչ մի դեպքում վերացարկում չէ (որ նշանակում է՝ ինչ-որ բանից քաղված). ավելի շուտ զգայելի բաներն են «վերացական», Գաղափարից քաղված:

Դեպի գաղափարը բարձրանալու պրոցեսը *դիալեկտիկան* է, որը Պլատոնը սահմանում է որպես «հարցնելու և հիմնավորելու» արվեստ («Պետություն», 533 c): Ջուտ հարաբերություններ հաստատելուց գոհանալու փոխարեն, ինչպես վարվում է մաթեմատիկան, դիալեկտիկան մեզ հայտնաբերել է տալիս ամեն չափի չափը, ամեն վարկածի ոչ-վարկածային սկզբունքը: Հասնելով դիալեկտիկական բարձունքի վերջնակետին՝ միտքը շարժվում է Գաղափարից Գաղափար, այսինքն՝ ռացիոնալ կերպով զարգացնում է անհրաժեշտ հարաբերություններ և ծնունդ տալիս ճշգրտորեն արտածված եզրակացությունների:

*Տրամախոսությունը* լավ է համապատասխանում ուսումնասիրության այս միջոցին: Սակայն նրա արտաքին ձևը չպետք է մեզ մոլորության մեջ գցի. եթե որևէ սիրալիր ու հլու-հնազանդ գործընկերոջ ներկայությամբ գործողություններն ավելի են հեշտանում («Սովետ», 217 c-d), ապա ճշմարիտ տրամախոսությունը նախ և առաջ հոգու խոսքն է

ինքն իր հետ, ինչը կոչվում է *մտածել* («Թեետետոս», 189 e):

**4. Դիսկուրսի դժվարությունները.** – Պլատոնը չի անտեսում այս ուսմունքի դժվարությունները: Գաղափարներն ինչպե՞ս կարող են կապի մեջ լինել այն իրերի հետ, որ իրենք չեն, բայց և գոյություն չունեն առանց իրենց: Եզակի Գաղափարը չտրոհվելով ինչպե՞ս կարող է հաշիվ տալ իրերի բազմության մասին: Որքան էլ լույսը մեզ տալիս է *հաղորդակցության* մոդել (այն լուսավորում է անթիվ-անհամար առարկաներ՝ առանց տրոհվելու և անհետանալու), մենք ենթարկվում ենք Գաղափարն առարկայացնելու և իրերի աշխարհից կատարելապես կտրված մտահասու աշխարհ կառուցելու վտանգին՝ ապարդյունորեն կրկնապատկելով վերջինս: Այս ամենից հետո, ինչպես կատակով բացատրում է Պլատոնը, տիրոջ էության կամ ինքնին տիրոջ պատճառով չէ ստրուկը ստրուկ, այլ՝ մսից ու ոսկորից կազմված տիրոջ: Հատկապես, ի՞նչ կերպ կապակցել խոսքի տարրերը՝ առանց Գաղափարների հետ *հարաբերություններ* հաստատելու: Եվ եթե խոսքի նպատակը Գաղափարն է, ինչպե՞ս կարող է գոյություն ունենալ *սխալ* խոսք:

Պլատոնն, ուստի, հարկադրված է պաշտպանել այս պարադոքսալ դրույթը. նա պետք է ապացուցի սխալ խոսքի հնարավորությունն ու իրական լինելը, առանց որի կբացառվի տարբերությունը ճիշտի և սխալի միջև, և խոսքը կվերանա: Բայց դրա համար հարկավոր է ցույց տալ, որ սխալ խոսքը ոչինչ չի ասում, քանի որ ոչինչ ասելը ոչինչ չասելն է, և իրապես ասված ամեն ինչ մեքենայաբար կլինի ճիշտ՝ ներառյալ նաև սխալը:

Հարկ է զգուշանալ Պարմենիդեսի նկատմամբ «հայրասպանություն» գործելուց, որը հայտարարել է, թե չկա չգոյություն: Երբ ասվում է սխալը, չի ասվում ոչինչ, ասվում է մեկ *այլ* բան, քան ճիշտն է: Կեցության, որ գոյություն ունի, և չգոյության, որը ոչինչ է, միջև տեղավորվում է մի



երրորդ կատեգորիա. *Այլը*: Այսկերպ այլությունը մուտք է գործում մտահասու աշխարհ: Դա հնարավորություն է տալիս Գաղափարները ներառել հարաբերությունների կենդանի խաղի մեջ, *ամբողջական կեցության* ներսում («Սովետստ», 249 a)՝ փոխանակ դրանք դարձնելու չեզոք ու մեկուսի կուռքեր:

Աշխարհների բաժանումն, այդուհանդերձ, մնում է: Նմանը միշտ կարող է ձգտել նմանին: Տիեզերաբանությունը հաստատում է դա. աշխարհն ամենագոր մի Աստծու կողմից չի ստեղծվել ոչնչից, այն ստեղծել է Դեմիուրգը՝ նախապես գոյություն ունեցող նյութերից (Նույն, Այլ, Խառնուրդ): Մեր այս աշխարհն, ուրեմն, այլասերվել է իր նյութի գոյաբանական անբավարարությունից: Մետաֆիզիկական այս *դուալիզմով* է Պլատոնը բացատրում չարիքը՝ միևնույն ժամանակ բացառելով Աստծուն հավասար Չարիքի սկզբունքի վարկածը (որ կլինի մանիքեության շարժիչ ուժը):

Հասկանալի է այն բառախաղը, որ վերաբերում է ոգեղեն հոգու գերեզման («séma») համարվող մարմնին («sôma»): Եթե ճշմարիտ է, որ Գաղափարներին ազգակից հոգին ինքն իր մեջ թաքցնում է սեփական կործանման պայմանները (Ֆեդրոսը սա համեմատում է մի լավ ու մի վատ ձիուց կազմված լծակառքի հետ, որի կառապանը դժվարությամբ է հետևում երկնային թափորին), ապա պակաս ճշմարիտ չէ և այն, որ մարմնավորումը ստորակա աքսոր է: Ահա թե ինչու հոգու անմահության պլատոնյան «ապացույցներն» ի վերջո ոչ այլ ինչ են, եթե ոչ նրա հավիտենական, կյանքի ու մահվան շրջափուլի հանդեպ էությամբ անտարբեր բնույթի հաստատում («Ֆեդոն»):

Այս պայմաններում, պատկերներով ու պատկերացումներով ծանրաբեռնված մեր լեզուն ինչպե՞ս կարող էր մեզ տալ բացարձակը (Նամակ VII): Գաղափարները իրերի լուսեղեն էություններն են, դրանք իրերը լուսավորող և մտահասու դարձնող լույսը չեն: Ինչպես արևն է զգայելի առար-

կաներ լուսավորող լույսից վեր, այնպես էլ իրականի ու նրա ճանաչողության պայմանը վեր է իրականից ու մտահասությունից. այս պայմանը Բարիքն է, որը մտահասու ամեն էություն գերազանցող Գոյը չէ և, ուրեմն, չի կարող լինել դիսկուրսի առարկա: Այլ կերպ ասած, փիլիսոփայությունը չի կարող լինել *բացարձակի բացարձակ իմացություն*: Այն դատապարտված է մնալու *սեր* իմացության, որին երբեք հասու չի լինելու: Ռացիոնալ լեզուն էստաֆետը պետք է փոխանցի դիսկուրսի այնկողմնային տարրի՝ *հայեցողությանը* :

**5. Մարդկային գոյություն.** – Մարդը չի խուսափի սրանից բխող տառապանքներից: Հայտնի է՝ գաղտնահաղորդյալը, որը Քարանձավ է վերադառնում, ինքնին իրականությունների տեսիլքով ու իդեալական ներդաշնակությունն այս աշխարհում ընդօրինակելու ցանկությանը զինված, վատ կընդունվի, կհամարվի խելագար կամ խանգարող մարդ և նույնիսկ մահապատժի կենթարկվի:

Ճշմարիտ Քաղաք-պետության ներդաշնակորեն կարգավորված գոյությունը մի՞թե անհնարին է: Բարիքի իրականացման հետ նույնացված և իրական պատմությունից դուրս դրված քաղաքական ծրագիրը ճշգրիտ իմաստով սոսկ ուտոպիա է: Ահա թե ինչու «Պետությունը» չի տալիս կիրառելի մոդել: Եթե նույնիսկ թագավորները փիլիսոփաներ լինեին, իսկ փիլիսոփաները՝ թագավորներ, միևնույն է՝ աշխարհի պայմանները ձախողման կդատապարտեին ամեն փորձ: *Ազնվականական* վարչակարգն անխուսափելիորեն անկում կապրեր կայացման ճնշման ներքո՝ դառնալով քաջության (timocratie), հարստության (oligarchie), արտոնված հավասարության չակարգ, ի վերջո վերածվելով բռնակալության < tyrannie >, երբ հաղթանակում են ամենանողկալի միտումները:

«Պետության» ճշմարիտ իմաստն, ուստի, *բարոյականն*

է: Եթէ խիստ նմանություն գոյություն ունի *մակրոսիեզերքի՝* Քաղաքի և *միկրոսիեզերքի՝* մարդկային հոգու (որում առճակատում են բանականությունը, «սիրտն» ու ձգտումները) միջև, ապա ճշմարիտ Քաղաքը ճշմարիտ հոգու մոդելն է, որ մարդը պետք է իրականացնի իր մեջ:

Բայց մարմնի մեջ սեղմված հոգին ինչպե՞ս կարող է հասնել ճշմարիտ կյանքին: Այստեղ է, որ դեր է խաղում էրոտիկ միջնորդությունը: Իրոք, Գեղեցկությունն արտակարգ արտոնություն է վայելում. մեր աշխարհից կտրված բոլոր ինքնին իրականություններից միայն նա կարող է դրսևորվել տեսանելի բաներում և դառնալ զգայելի («Ֆեդրոս», 250 b): Գեղեցկության որոնումն աշխուժանում է էրոսի՝ Կարիքի և Մեծ Կարողությունների որդու շնորհիվ, որը միջնորդ է մարդու և աստծու միջև: Սերն է բաժանված ամեն ինչ միավորում բոլոր մակարդակներում (կենդանական վերարտադրությունից մինչև ճանաչողություն): Նա է մեզ ներշնչում դեպի բացարձակը՝ հաջորդաբար պոկելով մեզ այս կամ այն գեղեցիկ մարմնից՝ սիրել տալու համար բոլոր գեղեցիկ մարմինները, այնուհետև գեղեցիկ հոգիները, գեղեցիկ պահվածքները, ընդհուպ թռիչքը դեպի ինքնին Գեղեցիկը («Խնջույք», 204–211): Ամբողջ Արևմուտքը կրի էրոսի այս ըմբռնման դրոշմը, որին կհակադրվի քրիստոնեության քարոզած սեր-պարզևը: Պլատոնի մոտ սերը բացառում է մարմնավորված եզակի անձին, որովհետև պետք է միշտ գերազանցել նրան: Սիրում են ինքնին Գեղեցիկը, բայց ոչ երբեք՝ որևէ մեկին:

Ճանաչողության էրոտիկան բնորոշ է պլատոնյան փիլիսոփայությանը. սա ոչ թե մտահայեցական պարզ ճանաչողություն է, այլ փրկության վերաբերյալ ուսմունք ու միջոց: Եթե այս աշխարհում փիլիսոփան պարտավոր է հարմարվել *խառնաշփոթ կյանքին*, որի ամենաթանկագին մարգարիտը *չափն* է («Ֆիլեբոս»), ապա նա նաև պետք է հույս տածի ձուլվելու Աստծու հետ՝ ձերբազատվելով ստորակարգ տար-

րերից, որոնք բոլորն էլ բեռ են հոգու թռիչքների համար («Թեոտետոս», 176 b): Այստեղ նկատում ենք, որ լարվածություները չի թուլանում ոչ մի *լուծմամբ*: Եթե «Ֆեդոնում» լսվում է Սոկրատեսի խոսքը, ապա մահը՝ այս «գեղեցիկ ռիսկը, որին պետք է դիմել», այն սահմանն է, որ մեր մարդկային դիսկուրսը չի կարող գերազանցել:

### III. – Արիստոտել

385–322 թթ. – Ստագիրոսում ծնված, Նիկոմաքոսի (Մակեդոնիայի թագավորի բժշկի) որդի, Պլատոնի աշակերտ, Ալեքսանդրի դաստիարակ, Աթենքում *Լիկեյոնի* հիմնադիր Արիստոտելը մեծ դեր է խաղացել արևմտյան գիտակցության ձևավորման գործում: Առաջին պլան է մղել իմանալու ցանկությունը, երջանկության որոնումը և գործունեությունը: Նա խթանել է մետաֆիզիկայի արկածն ու տարբեր իմացությունների ընդհանուր կազմակերպման վերաբերյալ մտածողությունը: Չնայած սահմանափակումներին, որի համար հետագայում հանդիմանվել է (հինգ տարրերի ուսմունքի և էությունների ֆիզիկայի պատճառով), նա բնության ճանաչողությունը տարանջատել է միթոսական դիսկուրսից, նպաստել գիտական ոգու ձևավորմանը:

**1. Իմանալու ցանկությունը.** – «*Բոլոր մարդիկ ի բնե ցանկանում են իմանալ*». այս վճռորոշ նախադասությունը սկիզբ է դնում ոչ միայն «Մետաֆիզիկային», այլև ողջ հետազոտությանը կենդանություն պարզևող *ոգուն*: Ամբողջ ընդգրկումով սահմանում է, որ մարդն իր բնույթով, էությամբ, որոնում է բացարձակի ռացիոնալ իմացությունը, որի մեր մեջ դրոշմված ցանկությունը խորապես մատնանշում է այն: Բայց այս ցանկությունն այլևս մարմնի մեջ բանտարկված հոգու ցանկությունը չէ. Արիստոտելի մոտ մարդն ամուր խարիսխ ունի բնության մեջ, նա գերազանցապես

«ապրողն» է: Չդադարելով լինել կենդանի՝ ունի առանձնահատուկ ունակություններ՝ սկսած ամենահամեստ փուլերից (օրինակ՝ նրա տեսողությունը ոչ միայն օգտակար է, այլև *հայեցողական*, ինչը նրանում ծնուն է *հաճույք*):

Այս կարգավիճակը թույլ է տալիս հիմնել իմացության բուրգը, իմացություն, որն ընդհատական աստիճաններով կարգավորվում է պատճառներին, ինչու-ին, հիմքին, գոյության իմաստին քիչ թե շատ մոտ գտնվելուն համապատասխան: Մինչդեռ *արվեստը* (կամ *տեխնիկան*) սոսկ բանականությամբ ուղեկցվող հակվածություն է անհատականին և շրջված է դեպի արտադրությունը, *գիտությունը* հասնում է համընդհանուրին, այն ճանաչում նախապատճառներով և կարող է ուսուցանվել:

## **2. Դիսկուրս բնական իրականության վերաբերյալ.** –

Կայացման պրոցեսում գտնվող բնական իրականությունները ոչ թե վերապահված են սովորական կամ առասպելային դիսկուրսին, այլ կազմում են *Ֆիզիկայի* առարկան, որը տեսական, կազմակերպված ու միասնական ճանաչողություն է: Կայացողը անցողիկ պարզ երևույթ չէ, քանզի այն, ինչ հայտնվում է *գործողության տեսքով*, նախ եղել է *պոտենցիալ ձևով*, որը ոչինչ չէ: Ֆիզիկական իրականությունը *նյութի* և *ձևի* միացություն է: Վերցնենք բրոնզե գնդիկի օրինակը. նրա ձևը (գունդը) հավիտենական է և անստեղծ, սակայն նրա նյութը չի կարող ընկալվել առանձին (բրոնզն արդեն միացություն է): Ուրեմն, նյութը անորոշության սկզբունք է, հակադրությունների զուտ ազդեցություն: Այն, ինչ գոյություն ունի, բաղադրյալ է:

Սա պարզ երևում է արվեստի գործում, ինչը ենթադրում է բնության տվյալներ ու սկզբունքներ, որոնք և նա պետք է *ընդօրինակի*: Հերմեսի արձանը կունենա չորս նախապատճառ. նյութը (եթե կուզեք՝ մարմարը, թեպետ այն մաքուր նյութ չէ), ձևը (աստծու ձևը), գործող պատճառը (քան-

դակագործը), նպատակը (աստվածությունը բացահայտ դարձնելը): Արվեստի առարկաների և կենդանի էակների տարբերությունն այն է, որ վերջիններս իրենց մեջ բովանդակում են իրենց շարժման սկզբունքը:

**3. Դիսկուրս լեզվի մասին.** – Դիսկուրսի համար լեզուն պետք է արտահայտի կեցությունը առանց, այդուհանդերձ, նրա հետ շփոթվելու: Սրանց տարբերությունը չհարգելու պարագայում, տարբերություն, որը դիսկուրսիվ կապի հնարավորություն է ընձեռում, ճիշտի և սխալի ընտրությունն անհնարին կլինի: Առաջադրելով այս դրույթը՝ Արիստոտելը կեցությունը կանչատի լեզվից ու կիսմնի *Տրամաբանության* ծավալուն մաս, սահմանելով հակասության բացառման և բացառված երրորդի սկզբունքները, վերլուծելով նախադասության գործառնությունը (սուբյեկտ, կապ, պրեդիկատ) և ձևակերպելով դատողության կանոնները:

Այսպիսով, սիլլոգիզմը հայտնվում է, և ընդմիջտ, իբրև գիտության և ուսուցման հատուկ գործիք, որովհետև ճշմարտությունն ապացուցում է երկու տերմինները նույն՝ երրորդ տերմինի օգնությամբ միավորելու միջոցով: *Դիալեկտիկան*, ընդհակառակը, տրամախոսության մեջ կարծիքների բախմամբ ծնունդ է տալիս միայն հավանական եզրակացությունների: Ինչ վերաբերում է *հռետորիկային*, ապա սրա նպատակը հարաբերությունն է իր կրքերով հանդերձ իբրև ամբողջություն վերցված գրուցակցի հետ:

**4. Մետաֆիզիկայի հիմնահարցը.** – Ֆիզիկական իրականությունը իրականի ամբողջությունը չէ: Սակայն ի՞նչ դիսցիպլին կարող է հասնել այն բանին, ինչը ֆիզիկա չէ: Չպետք է շտապ պատասխանել՝ մետաֆիզիկան: Հենց սկզբից էլ, իրոք, բառն ու բանը դժվարություն են ներկայացնում: «Մետաֆիզիկան» կարող է մատնանշել այն, ինչը շարադրվում և ուսուցանվում է ֆիզիկայից *հետո*, բայց նաև

այն, ինչը *վեր* է աստիճանակարգման տեսակետից, բնությունից անդին է, նյութից անջատ: Հասկանալի է, որ հարկ է ստեղծել գիտություն «բարձրագույն իրողությունների» վերաբերյալ, սակայն որո՞նք են այդ իրողությունները: Ի՞նչ կարգով բնորոշել դրանք՝ *առաջնայնությամբ*, թե՞ *համընդհանրությամբ*:

Եթե շեշտը դնենք այն բանի վրա, ինչն *առաջինն* է, ապա գերագույն գիտությունը *աստվածաբանությունն* է: Ամենաստվածային գիտությունը միևնույն ժամանակ այն գիտությունը չէ՞, որի ուսումնասիրության առարկան Աստվածն է, և որը քննության է առնում աստվածային բաները: Աստվածային էությունը մյուս էությունների պես չի ենթարկվում քանակի, որակի, ժամանակի, տեղի և այլնի կատեգորիաներին: Նրան խորթ է ծնունդը, կայացումն ու մահը: Նա Գերագույն Պատճառն է, Առաջին Շարժիչը, որը շարժման մեջ է դնում մնացյալ ամեն ինչ (իբրև սիրո առարկա հանդիսացող ցանկությամբ, որն էլ նրան թույլ է տալիս խուսափել իր իսկ կողմից շարժման մեջ դրվողի հետ կապված լինելուց): Բայց եթե գերագույն ճանաչելին Աստվածն է, որը միևնույն ժամանակ Գերագույն Ստածողությունն է, այդժամ Աստված մտածում է ինքն իրեն, նա *մտածողության Ստածողություն* է («Մետաֆիզիկա», Լ. 7): Այս պայմաններում փիլիսոփայությունը, որը բարձրագույն գիտությունն է, *մարդուն անմատչելի և Աստծուն վերապահված* կլինի:

Փոխարենը, եթե նախապատվությունը տանք գոյի *համընդհանրությանը*, ապա գերագույն գիտությունը կլինի *գոյաբանությունը* <ontologie>՝ իբրև գոյի մասին գիտություն: Բայց նրա առարկան արդյո՞ք բոլոր էակներին, առաջնային սկզբունքներին, կամ տարանջատ իրականություններին վերաբերող ընդհանուր գոյից է կազմված: Մերժելով միասնական իրականությունից անհիմն կերպով անջատված, անձնավորված ձևեր դարձած Գաղափարների մասին պլատոնյան ուսմունքը՝ Արիստոտելը նշում է, թե որքան

դժվարին կացության մեջ է հայտնվել փիլիսոփայությունը, որը բզկտված է գոյի դիսկուրսի և աստվածաբանության միջև, որը նույնպես գոյին է վերաբերում, սակայն այն գոյին, որը մի գոյ է: Մեր գիտությունը կկարողանա այդ միասնությունը դարձնել մոդել ու չափ, այդուհանդերձ, հարկ կլինի, որ վարժվի այդ բաժանումներին:

**5. Մարդը և գործողությունը.** – Ի՞նչ է մարդը: Կատարյալ էակ, այլ ոչ թե հանկարծական դրսևորման արդյունք: Արիստոտելը բացարձակապես հերքում է ամեն պարզեցում բարձրագույնից մինչև ցածրագույն. «Մարդն ունի ձեռքեր, որովհետև բանական է», նա բանական չէ ձեռքեր ունենալու պատճառով («Կենդանիների մասեր», IV, 10): Հոգին անջատ և անկում ապրող էություն չէ այլևս, *մարմնի ձևն* է, առանց որի մարմինը մարմին չէ: Մարդու դեպքում հոգին համատեղում է բոլոր ֆունկցիաները. վեգետատիվ, զգայական, մտավոր (աստվածային բնության մի մասով՝ *պասսիվ* և մյուս մասով՝ *ակտիվ*, տրանսցենդենտ):

Այս մարդաբանությունը հնարավորություն է տալիս նորացնել էթիկական մեծ հարցադրումները: Հակառակ Պլատոնի, որն առաջադրում է արմատապես անջատ, անմատչելի ինքնին Բարիքի խնդիրը, Արիստոտելը ամեն բարիք սահմանում է իբրև նպատակ (սննդի, մասնագիտական, հոգևոր և այլն): Սակայն այս բոլոր բարիք-նպատակները չարժեն իրար. Կան հարաբերական բարիքներ (այլ բանի համար) և բացարձակ բարիք, որն ինքնանպատակ է: Մարդու համար գերագույն բարիքը *երջանկությունն* է: Բոլորը «բարիք» են փնտրում, բայց բոլորը չէ, որ գտնում են բարին, քանի որ դյուրին է հարաբերական բարին ընդունել որպես բացարձակ Բարիք:

Ինչպե՞ս իրականացնել Բարիքը: *Առաջնորդվելով բանականությամբ*, այսինքն՝ դառնալով *առաքինի*: *Առաքինությունը*, բարոյական թե մտավոր, հնարավորություն է տալիս



կոնկրետ կերպով միավորել բնությունը, դաստիարակությունն ու բանականությունը: Լինելով «բարի սովորությունների դուստր»՝ առաքինությունը մարդու մեջ ծնում է «երկրորդ բնություն»:

Սահմանվելով իբրև իրարամերժ արատների «ուկե միջին»՝ բարոյական առաքինությունը ոչ մի դեպքում չափավոր միջակություն չէ: Օրինակ՝ եթե քաջությունը միաժամանակ հակադրվում է թուլամորթությանը և հանդգնությանը, ապա, այդուհանդերձ, դրանց միջին թվաբանականը չէ: Առաքինությունը գերազանցության գագաթնակետն է, օպտիմալը, միակ առաքինի վարքը արատավորների բազմությանը դեմ հանդիման:

Քանի որ առաքինի վարքը կատարելապես համապատասխանում է մարդկային էության պահանջներին, այն պսակվում է *հաճույքով*: Այս գաղափարը կարող է թվալ տարօրինակ, եթե դիմենք բարոյականության դեմ սովորաբար հեղոնիզմի վարած դատին: Եվ սակայն, հաճույքի իսկական բնույթը ճանաչելու պարագայում պետք է ընդունենք, որ այստեղ չկա հակասություն: Իրոք, երբ հասկանալի է դառնում, որ հաճույքն ինքնին նպատակ, անջատ իրականություն չէ, այլ հատույց, *անվճար հավելում*, որը միտված է ակտիվությունն ավարտին հասցնելու, ապա այլևս չենք կարող այն հակադրել առաքինության ակտիվությանը, որը հնարավոր նեցուկներից նրան առաջարկում է լավագույնը: Տարօրինակ է, սակայն հաճույքի միակողմանի փառաբանումն է կործանում այն՝ այլասերելով նրա բնույթն ու ֆունկցիան: Հաճույքն իբրև շնորհ իրականացվում է միայն այն ժամանակ, երբ միանում է գործողությանը, «ինչպես գեղեցկությունը՝ ծաղկուն տարիքում գտնվողների համար» («Նիկոմաքյան էթիկա», X, IV):

**6. Կյանքը Քաղաք-պետությունում.** – Մարդը միջնորդ էակ է, որի գոյությունը ձեռք է բերում համապատասխան

շրջանակ՝ Քաղաք-պետությունը: Նա *հասարակական կենդանի* է: Առանց Քաղաք-պետության մարդը կլիներ «աստված կամ վայրենի» («Պոլիտիկա», ներած.): Քաղաք-պետությունը սովորական կենդանական *հասարակություն* չէ, պահանջում է կազմակերպվածություն, հաստատություններ, որոնք ազատության ու բանականության ստեղծագործություններ են: Քաղաք-պետության հիմքը *Արդարությունն* է, որի շարժիչ ուժը *հավասարությունն* է (համամասնական կամ *երկրաչափական* հավասարություն, երբ հարկ է անհավասար կերպով, ըստ արժանիքի և աշխատանքի, հատուցել անհավասարներին, և *թվաբանական* հավասարություն, երբ յուրաքանչյուրին առանց բացառության պետք է տալ հասանելիքը, – հանցանքների և զանցանքների պարագան): Մեկ ուրիշի հետ կապ բովանդակելու չափով Արդարությունը *կատարյալ առաքինություն* է: Բայց դա Քաղաք-պետության բարձրագույն իդեալը՝ *բարեկամությունը* չէ: Միայն արդար, բայց առանց բարեկամության Քաղաք-պետությունը անմարդկային կլիներ: Իսկ եթե իշխեր բարեկամությունը, արդարությունն ավելորդ կդառնար:

**7. Գերագույն երջանկությունը.** – Չպետք է պատրանքների տրվել. մարդկանց մեծ մասն ընդունակ չէ փիլիսոփալինելու և կդառնա սոսկ լավ քաղաքացի: Գերագույն երջանկությունը *հայեցողական ակտիվությանը* (*նուսին*՝ հոգու բարձրագույն և զուտ աստվածային մասին) տրվող փոքրաթիվ ընտրյալներին է վերապահված: Այդ ակտիվությունը պետք է դրվի առաջին շարքում, որովհետև ինքնանպատակ է, և ոչ թե՛ այլ բանի համար, ինչպիսիք են *օգտակար* ակտիվությունները: Այն թույլ է տալիս հասնելու գերագույն երջանկությանը՝ ուղեկցվելով ծավալված ակտիվությանը համապատասխան անգերազանցելի հաճույքով: Այս եզրակացությունը տրամաբանական է, բայց մեզ հանգեցնում է մի զարմանալի պարադոքսի. այն պահին, երբ մարդը հաս-

նում է իր գերագույն նպատակին, անդրանցում է այն և դառնում առավել քան մարդ: Իրոք, այդպիսի նպատակն այլևս ոչ թե մարդկային է, այլ՝ աստվածային: Ամեն ինչ, ուրեմն, կատարվում է այնպես, ասես մարդն *այն էակն է, որ ինքը լինելու համար պետք է լինի առավել, քան ինքը*: Մարդու չափը գուցե անչափությունն է: Կյանքը պառակտված չէ երկու առանձին աշխարհների միջև, ինչպես Պլատոնի մոտ է, սակայն այն կյանք չէր լինի առանց այդ ներքին լարումի:

#### IV. – Պլոտինոս

205–270 թթ. – Քանի որ Պլոտինոսը գոյա-աստվածաբանության և մետաֆիզիկայի դիսկուրսի առկայությամբ զարգացրել է փիլիսոփայության միստիկական ասպեկտը ամենայն խստությամբ ու մաքրությամբ՝ այն *հնարավոր տիպական այլ մոտեցում* դարձնելու աստիճան, ապա նա առավել քան նեոպլատոնականության տեմորն է: Գոյը առաջնությունը զիջում է Մեկ-ին և անտեսում դիսկուրսը: Այն, ինչը դեռևս փիլիսոփայություն է, միանում է նրան, ինչն արդեն փիլիսոփայություն չէ: Իր տեսակի մեջ անհնար է գերազանցել Պլոտինոսին:

Եթե ընդունենք, որ լեզուն կարող է իրեն ազատել հավակնություններից, ապա դատողությունն ունի անողոք տրամաբանություն (սա է «էնենեադների»՝ «իննյակների» պարադոքսը):

Փիլիսոփայական վերելքի ավարտին հայտնաբերում ենք բացարձակապես նախագո, բացարձակապես կատարյալ Սկզբնապատճառ, որը կախված չէ ոչնչից, սակայն որից կախված է մնացյալ ամենայն ինչ: Քանի որ այն կյանք է պարզուն գոյություն ունեցող ամեն ինչի, ապա վեր է գոյից. այն *չկա*: Բայց որովհետև ոչ մի գոյ չի կարող լինել առանց *մեկ* գոյ լինելու (բանակ, երգչախումբ, տուն, նախիր...) և տարբերվում է այն ամբողջից, որի մասն է, ուրեմն ոչ-վարկածային Սկզբնապատճառը, որ ո՛չ կա, ո՛չ էլ առկա է, Մեկն է:

Մեկը չէր լինի ամենակատարյալը, եթե լիներ միակ: Սակայն նա, այդուհանդերձ, չունի իր ստեղծածի կարիքը: Նա անձնավորված Աստված չէ՝ ազատությամբ ու սուբյեկտիվությամբ օժտված աշխարհի արարիչ: Այն նաև մողել կամ արքետիպ չէ, ինչպես պլատոնյան Գաղափարը: Մեկը ամեն ինչի ուժն է, և նրա ուժը տարածվում է ամենուրեք, *արտաբխում* այնպես, ինչպես ջերմությունն է անջատվում կրակից: Մեկից արտաբխված սուբստանցներն են (կամ *գոյառումները* < hypostases >) Բանականությունը, Գոգին և վերջապես՝ նյութեղեն աշխարհը:

Ի՞նչ կարելի է ասել Մեկի մասին: Ոչինչ: Լինելով դիսկուրսի սկզբունք՝ այն դիսկուրսից դուրս է, խույս է տալիս նրա ազդեցություններից: Իբրև բանականության սկզբունք՝ մնում է բանականությունից վեր, որն էլ, ուստի, չի կարող այն բովանդակել իր մեջ:

Մեզ մնում է միայն միստիկական փորձի ուղին: *Բխմանը* (Մեկի էջքն առ մատերիան) պետք է համապատասխանի *չրջադարձը*, որով աստվածային մասնիկ հանդիսացող հոգին պետք է նետվի դեպի Մեկը՝ միանալու նրան: Ջուրկ լինելով նրանից, ինչը «ո՛չ մաքուր է, ո՛չ էլ անեղծ» (հակվածություն դեպի մարմինն ու նյութը), հոգին վերագտնում է իր գեղեցկությունը, որի աղբյուրը ոչ-վարկածային Սկզբնապատճառն է: Էքստազի վիճակում իմաստունը «աստված» է դառնում:

Բանականի դիալեկտիկան տեղը զիջել է հոգևոր կյանքին: Պլոտինյան փիլիսոփայությունը կրոնական փիլիսոփայություն է, սակայն առանց կրոնի:

## **V. – Փիլիսոփայությունը որպես ապրելու արվեստ**

Արդյոք կարո՞ղ է մարդն ապրել մարդկայնորեն, և ապրել երջանիկ, եթե միաժամանակ հրաժարվի թե՛ տեսական մեծ փիլիսոփայությունների ջանքերից, թե՛ կրոնների խոստումներից ու պատվիրաններից՝ առանց, այդուհանդերձ, ապավինելու սկեպտիցիզմի,

ցիմիզմի ընձեռած հարմարավետ պայմաններին կամ կենդանական դարձած գոյության գոեհկություններին:

Նա կարող է դա անել, եթե ընդունի, որ իրերն այնպիսին են, ինչպիսին որ կան, ինչպես որ երևում են, և որ, այնուամենայնիվ, հնարավոր է հետայնու ստեղծել իրեն երջանկություն պարզևող իմաստություն:

Եպիկուրականությունն ու ստոիցիզմը, յուրաքանչյուրը յուրովի, մեզ առաջարկում են անհրաժեշտն ու բավարարը: Տվյալ իմաստությունների մասին, որպեսզի ընդգծվի, որ դրանք այլևս չեն փնտրում *ցանկության* բոլոր պատրանքների հետ մեկտեղ մերժված իմացություն կամ փրկություն, ասվում է, որ «հուսահատության դուստրերն» են: Այդուհանդերձ, դրանք չեն ցանկանում արմատախիլ անել բազմակերպ չարիքը. զբաղվում են միայն դրա հետևանքներով: Ձևափոխում են ոչ թե աշխարհի կարգն ու ընթացքը, այլ մեր վերաբերմունքը:

Եպիկուրականությունն ու ստոիցիզմը վիթխարի հաջողություն են ունեցել Հնադարից շատ հետո: Եթե դրանք զուգադրում են, չնայած դրանց հակադրություններին բոլոր կետերում, ապա այն պատճառով, որ նույն թեմայի տարբերակներն են, ընդունում են բացարձակի անանձնական ու ներակա նույն տեսակը: Դրանցով փիլիսոփայությունն այլևս ապրելաձև է սոսկ, երջանիկ ապրելաձև: Նրա տեսական մասնաբաժինն այլևս միջոց է միայն: «Փիլիսոփայությունը սովորեցնում է անել, և ոչ թե ասել», – ասում է Սենեկան: «Ձուր է փիլիսոփայի խոսքը, եթե չի կարող դարմանել հոգու ցավը», – հաստատում է Եպիկուրյան մի ասույթ:

**1. Եպիկուրականություն.** – «Արևմուտքի Բուդդիա» Եպիկուրոսի (թ.ա. 341–270) ստեղծած, Լուկրետիոսի (99–55) «De Rerum Natura» <<Իրերի բնության մասին>> աշխատության մեջ փառաբանված ու մեծարված Եպիկուրականությունը մասսայականացրել է միայն *ֆիզիկան* (ինչին լայնորեն անդրադարձել է Դեմոկրիտը), որը կարող է լիովին հաշիվ տալ նրա բարոյագիտության մասին:

Եպիկուրյան ֆիզիկան ոչինչ չունի պոզիտիվ գիտությունից բառիս ժամանակակից առումով: Նրա դիսկուրսն ամեն ինչով պարտական է իր ֆունկցիային, որի էությունը իրականն ամբողջապես ու մաս-մաս կառուցելն է՝ բացառելով Գաղափարը, Բարիքը, Ոգին, ինքնին-ը < l'en-soi > բոլոր ձևերով, որպեսզի մարդուն ազատի սնահավատություններից ու երկյուղներից: Այն ընկալուն է Բնությունն իբրև ներակա ամբողջություն, որի իրականությունն ու օրենքները զուտ նյութեղեն են:

Քանի որ իրականը չի կարող ծնվել չգոյությունից, ոչ էլ անհետանալ չգոյության մեջ, սակայն շարունակ ձևափոխվում է, ապա կարող է կազմված լինել միայն *ատոմներից* (անտեսանելի ու անբաժանելի նյութեղեն տարրերից) և *դատարկությունից* (շարժման և մի ձևից մյուսին անցնելու պայմանից): Մարմինները, հոգիները (որոնք մեկ մարմին են սոսկ մարմնի մեջ), աստվածները (շատ նուրբ նյութից կազմված) պատահականորեն զուգորդված ատոմների միացություններ են, որոնք «մահվանից հետո» տարանջատվում են և հետո վերակազմավորվում այլ կերպ:

Եթե չավելացվեր հայտնի clinamen-ը՝ խտտորումն ուղղահայացից, ապա զուգահեռ հոսքով ու հավասար արագությամբ անձրևի պես թափվող ատոմները երբեք չէին հանդիպի ու չէին կազմի մարմին: Եվ ուրեմն, clinamen-ը պատահականություն է ներմուծում անողոք անհրաժեշտության մեջ, ինչն էլ որոշ «ազատության» հնարավորություն է ընձեռում (այն իմաստով, որ ամեն կենդանի էակ, լինի մարդ թե ձի, ընդունակ է դիմադրություն ցույց տալու մատերիային):

Այս մատերիալիզմը մետաֆիզիկական միհիլիզմ է. ամեն ինչի խորքում չկա ո՛չ էություն, ո՛չ Ոգի, այլ՝ միայն տարրական մատերիա, անկարգություն ու անիմաստություն: Մարդն իբրև այդպիսին գոյություն չունի:

Ի՞նչ ենք շահում այս ամենի իմացությունից: Սարսափից

ու պատրանքային բացատրություններից ազատվելու հնարավորություն միայն: Իրոք, պոզիտիվ կերպով ղեկավարվելու համար մեզ մնում է միայն մի բան. *այն փաստը, որ կենդանի էակը երանություն է ստանում հաճույքից և խուլյս տալիս ցավից*: Բայց այդժամ, անմիտներն ու անգետները, որոնց կարծիքով երջանիկ լինելու համար բավական է վայելել պահը, ինչու՞ են բորբոքում իրենց դժբախտությունը: Հաճույքի զգացումը մի՞թե խաբուսիկ է:

Դա այդպես չէ: Վայելքը բխում է մարմնից, որը միակ ռեալությունն է («Ամեն բարիքի հիմքն ու արմատը որովայնի հաճույքն է»): «Բարին» ու «չարը» մեր զգացմունքներն ընդգրկող բառեր են սուկ: Բայց *առանց իմաստության մենք անտեղյակ ենք մնում երևույթների ներքո գործող, ցավ առաջացնող պրոցեսներին*: Միայն իմաստունին է հայտնի այն «քառակի դեղը», որը կարող է բուժել մեզ:

1) Աստվածներից վախենալու պատճառ չկա, քանի որ իրականությունն ամբողջապես բացատրվում է ատոմների շարժմամբ (խավարումն, օրինակ, աստվածային սպառնալիք չէ): Կյանքից հետո չի լինի ո՛չ բարիների հատույց, ո՛չ էլ չարերի պատիժ: Այդ հավատքն է, – իսկական անաստվածություն, – մարդկանց դարձնում վախկոտ ու դժբախտ:

2) «Մահը» ոչինչ է, քանի որ խարխլում է իրականի չափման զգացումը. «Քանի դեռ գոյություն ունենք, մահ չկա (...), երբ վրա է հասնում մահը, մենք այլևս չկանք» («Նամակ Մենեկևսին»): Մահվան սարսափն, ուստի, չունի ոչ մի հիմք, սակայն թունավորում է մեր կյանքը: Իմաստունը չի ափսոսում, որ ծնվել է անհետ կորչելու նպատակով: Պարզապես ապրում է՝ մահ չփնտրելով և, սակայն, նրանից չխուսափելով:

3) Կարելի է հանդուրժել ցավը, քանի որ դադարում ենք զգալ այն, եթե սա անդրանցում է մեր ունակությունները:

4) Դյուրին է երջանիկ լինել, երբ կարողանում ես գոհանալ բնական ու անհրաժեշտ հաճույքներով (ուտել, խմել)

ու հրաժարվել բնական, սակայն ոչ անհրաժեշտ հաճույքներից (նրբահամ խորտիկներ, սիրային հաճույքներ), ինչպես և նրանցից, որոնք ո՛չ բնական են, ո՛չ էլ անհրաժեշտ (հարստություն, պատիվներ):

Գործնականում, անհրաժեշտ է լինել ինքնաբավ և բավարարվել քչով: Չափավորությունը իմաստունի առաքինությունն է, քանզի հնարավորություն է տալիս հասնելու *ataraxie*-ի < անխռովության >՝ տազնապի բացակայության, որը երջանկության բանալին է:

**2. Ստոիցիզմ.** – Ընդգրկելով մոտավորապես վեց դար՝ Ջենոն Կիտիոնցուց (Ք.ա. 332–262) մինչև Մարկուս Ավրելիուս (121–180), անցնելով Կլեանթեսով, Սենեկայով և Էպիկտետոսով, ստոիցիզմը բացառիկ անվան տակ (*Ստոա*՝ ճեմասրահ Աթենքում) իրենից ներկայացնում է մի էական միասնություն՝ իր տիպական դիքորոշմամբ: Լինել փիլիսոփա ամենից առաջ նշանակում է նախապես, վճռակաճորեն ընտրել այն մարդու տեսակը, որն ուզում ես լինել: Այս պահից սկսած ամեն ինչ կապակցվում է փիլիսոփայությունը կարելի է համեմատել ձվի հետ, որի կճեպը տրամաբանությունն է, սպիտակուցը՝ բարոյագիտությունը, իսկ դեղնուցը՝ ֆիզիկան:

Ստոիցիզմի հիմնական գաղափարն այն է, որ Բնությունը իրականի ամբողջությունն է, որում ամեն ինչ մշտապես վերադառնում է Նույնին: Այդ Նույնը աշխարհի Կյանքն է, որի բոլոր տարրերը կապակցված են համընդհանուր համակրությամբ: Քանի որ պատճառներն ու հետևանքները կապվում են հաստատուն կերպով, ապա աշխարհի օրենքը ճակատագիրն է:

Այս ֆիզիկան նմանապես նաև *աստվածաբանություն* է, քանզի եթե ամեն ինչ Նույնն է, ապա աստվածների դիսկուրսը նույնական է Բնության դիսկուրսին: Ուստի չպետք է սխալ պատկերացում կազմել այն հրաշալի աղոթքների մասին, որ ոմն Կլեանթես ուղղել



է Ջևսին, հանձին որի գայթակղություն կունենան ճանաչելու հրեաքրիստոնեական միաստվածության Աստծուն: «Աստված» ինչ-որ մեկը չէ, այլ տիեզերքում ներկա աստվածայինի ամբողջությունը: Անհրաժեշտություն անվանվի նա, *Լոգոս* (մտահասության սկզբունք) թե *Պնևմա* (կենդանացնող պատճառ), ամեն ինչ կատարվում է Բնության՝ ճակատագրի և Նախախնամության համընդհանուր օրենքների համաձայն:

Մարդը սոսկ բնական էակ է մյուս էակների շարքում, այն տարբերությամբ, որ միակ դատող մահկանացու էակն է, որովհետև նրա հոգին համընդհանուր *Լոգոսի* մասնիկ է: Այս հատկանիշը ստոիկներին մղել է զարգացնելու *հարաբերության* մի տրամաբանություն, որ նոր փիլիսոփաները կվերահայտնաբերեն շատ մեծ հետաքրքրությամբ:

Մեծ Ամբողջի մեջ մարդու այս կարգավիճակը ամրագրում է նրա վարքի կանոնը. ապրել Բնությանը համապատասխան, նրա հետ կատարյալ ներդաշնության մեջ: Լինելով աշխարհի մաս՝ *Լոգոսով* ղեկավարվող մարդը պետք է ազդի ճակատագրով ղեկավարվող աշխարհի վրա, որպեսզի առաջացնի ներդաշնություն: Ինչու՞ ցանկանալ աշխարհին այնպիսին, ինչպիսին որ է՝ փոխանակ փոփոխելու այն: Որովհետև աստվածային է: Քանի որ Աստված բնորոշվում է անվրդովությամբ, իմաստունն այդ անվրդովությունը պետք է իրականացնի իր մեջ. դա *apatheia*-ն <անկրքություն> է: Բնության հետ ներդաշնությունը երջանկություն է ծնում, որովհետև իրականացվում է կյանքի ու անձի միասնությունը բանականության կանոնի ներքո, բանականություն, որն ինքն էլ ներդաշն է բնության հետ: Այս իմաստով, մարդն *ավարտին է հասցնում* Բնությունը:

Բայց ստոիցիզմն, այդուհանդերձ, ֆատալիզմ չէ: Եթե ճակատագիրը կախված չէ մեզանից, ապա *մենք ենք համաձայնում կամ մերժում*: Մեզանից չի կախված Բնությունից ծնվելն ու այնտեղ վերադառնալը, ինչն անվանում են «մա-

հանալ»: Մեզանից չի կախված էպիկտետոսի պես ստրուկ կամ Մարկուս Ավրելիոսի նման կայսր լինելը: Սակայն մեզանից է կախված, *թե ինչ ենք դարձնում այն, որ կախված չէ մեզանից*: Ստոիցիզմն այստեղ հաստատում է բացարձակ, անվերապահ *ազատություն*: Ինչպես որ չենք կարող քանի առաջացնել, սակայն կարող ենք այն լավագույնս օգտագործել մեր առազաստանավերում, այնպես էլ կարող ենք խուսափել մեր մահվան հոգսից կամ մոռանալ այն, ինչը բզկտում է մեր մարմինը: Իմաստունը կարող է ընտրություն կատարել՝ մեռնել առանց հառաչանքի, մեկնել գլուխը, երբ Ներոնը նրան դատապարտում է գլխատման, կրկին պարզել այն, երբ դահիճը վրիպել է հարվածը: Աշխարհում ոչ մի ուժ չի կարող նրան համոզել համաձայնելու որևէ սխալ առաջարկի, եթե նա դա չի ցանկանում:

Ստոիցիզմը *առաքինության ատլետիզմ* է: Առաքինությունը Բարին է, որովհետև *ուժ* է: Ահա թե ինչու բոլոր առաքինությունները *կազմում են մեկ ամբողջություն*։ լինել բարի, ճշմարտախոս, գեղեցիկ, ազատ, սիրալիր, գիտուն, քուրմ, մարգարե, աստվածային՝ ամբողջական միասնություն է: Համապատասխանաբար, քանի որ արատը *թուլություն* է, սխալները չունեն աստիճաններ. կարելի է խեղդվել թե՛ ծանծաղ ջրում, թե՛ անդունդում: Կամքի ամեն անզորություն չարիք է:

Առաքինությունից զատ ուրիշ ի՞նչ հատույց կարող է ակնկալել իմաստունը: Ոչ մի: Չկա ո՛չ այնկողմնային Քաղաք, ո՛չ էլ հետմահու անձնական կյանք: Իմաստունը նա է, ով ինքնաբավարարվում է: Հասնելով կատարյալ ներդաշնությանը՝ նա երջանիկ է: Եթե ձեռնարկունը չափազանց դժվարին է թվում, գոնե կարելի է իմաստունին դարձնել *տիպար*, իսկ առաքինի արարքը՝ *պարտականություն*, և այս կերպ ինքն իրեն պարզեղել իմաստությունն *ընդօրինակելու* միջոցները: